հէնց դրանով ուզում եմ ապացուցանել, որ մեր կառավարությունը ի վիճակի է իրականությունը տեսնել իր պարզությամբ: Դրա հետ միասին մենք պարտաւոր ենք մասնաւորապէս նշել նաև այն թերութիւնները, որոնք, դժբախտաբար, շարունակում են մնալ իրենց ամբողջությամբ:

Ես չեմ ուզում կանգ առնել մեր երկրի վարչական, քաղաքական, ֆինանսական կամ տնտեսական խնդիրների վրա, որոնք շօշափուեցին պ. նախարարապետի հաղորդագրության մէջ: Բայց ես նախ ուզում էի ձեր ուշադրությունը հրաւիրել այն պարագայի վրա, որ այս ամբիոնից մենք լսել ենք բազմաթիւ ու բազմատեսակ ճառեր, արտայայտուած մտքեր, որոնք այսօրուայ իրողությունը նախապատրաստեցին և որոնք դեռ շարունակում են գոյություն ունենալ և՛ խորհրդարանի, և՛ կառավարության, և՛ բանակի, և՛ ժողովրդի մէջ: Այո՛, պատգամաւոր Աղբալեանը մեր երկրի որոշ մասերի մէջ եղած տգիտությունը չեչտեց, բայց ո՞վ փորձեց լոյսի մի ճառագայթ, մի աղօտ ճառագայթ տանել այդ խաւար անկիւնները: Ամենից ցաւալին ու զարմանալին այն է, որ յաճախ դերի ու տեղի փոփոխությունը փոփոխություն է առաջացնում նաև մեր մտքերի, մեր գործերի մէջ:

Ուզում եմ ասել, որ մենք չունենք հետևողականություն մեր գործերի մէջ, որ մեր դաղափարներն ու գործերը իրար չեն շաղկապւում: Մենք շուտով մոռանում ենք մեր երէկը, ձգտում ենք ապրել առօրեայ կեանքով և ոչ մի անգամ մեր երէկը, այսօրը և վաղը համաձայնեցնում ենք իրարու հետ:

Պ. նախարարապետի և պատգամաւոր Աղբալեանի խօսքերի մէջ ցայտուն կերպով նկատելի էր մի պարագայ: Կարծէք թէ մենք մոռացել ենք մեր դարաւոր թշնամին, որի դէմ, երէկ, ուղղում էինք մեր ուժերն ու դէնքերը, իսկ այսօր բոլորովին այլ թշնամի ենք տեսնում, որը գալիս է հիւսիսից, որի դէմ ծառանում ենք բոլորս միասին և մեր ամբողջ ուշադրությունը ուղղում դէպի հիւսիս: Վտանգաւոր է հիւսիսը. դրա համար կասկած չկայ. բայց չմոռանանք հարաւը, որը նոյնպէս միշտ մեր դրան պատրաստ կանգնած է: Ես ուզում եմ ասել, որ մենք ամենից առաջ հետևողականություն ունենալու ենք մեր բոլոր գործերի մէջ և իրար հաշտեցնելու ենք մեր երէկը, այսօրը և վաղը:

Երկրորդ պարագան, որի վրա ուզում էի կանգ առնել և ձեր ուշադրությունը հրաւիրել, դա հիւսիսի վտանգն է: Մենք ատում ենք ռուսը: Մենք ատում ենք չէ թէ այն ռուսը, որը իր երկրի ու ժողովրդի համար է գործում, ընդհակառակը, մենք ատում ենք այն ռուսը, որը իր երկրի սահմաններից դուրս ձգտում է իր տիրապետությունը տարածել ուրիշների վրա և նրանց իրաւունքներին տէր դառնալ: Մենք ատում ենք այս վերջին ռուսը, ինչ գոյնի կամ ձևի թող լինի, բաւական է, որ մեր արդար ու սեփական իրաւունքին աչք է դնում:

Պ. նախարարապետը ոչ մի անգամ ցոյց չտուաւ այն իրական ու նոր միջոցները, որոնցով նոր կառավարությունը կուելու է այդ ռուսականության դէմ, որը երէկի ժառանգությունն է, որը շարունակում է գոյություն ունենալ այսօր՝ խորհրդարանից սկսած մինչև վերջին քաղաքացին, և որը, հաւատում եմ, դեռ գոյություն ունենալու է նաև վաղը: Ի՞նչ արաւ մեր կառավարությունը արմատապէս ջնջելու այդ ռուսականությունը — դժբախտաբար, պ. նախարարապետը չտուաւ դրական փաստեր այդ ուղղությամբ:

Բայց թոյլ տուէք նախ շօշափել այս հողային խնդիրը: Աստեցաւ, որ կառավարությունը օրէնք է մշակել վերջնականապէս կարգադրելու հողի խնդիրը, որը մեր երկրի ու մեր ժողովրդի ամենացաւոտ խնդիրներից մէկն է և որի համար իրաւացիօրէն դժգոհում է մեր գիւղացիությունը: Բաւական